

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Սուրբ Ներսէս Շնորհալի

Սուրբ Ներսէս Շնորհալի Հայ Առաքելական եկեղեցւոյ պատմութեան մեծագոյն հայրապետներէն է: Պահլաւունիներու ազնուական տոհմէն ըլլալով՝ ծնած է Տլուք գաւառի Ծովք բերդին մէջ, 1102 թուականին: Շատ երիտասարդ տարիքէն սկսեալ հոգեւոր կրթութիւն ստացած է եւ ձեռնադրուած է քահանայ, ապա եպիսկոպոս:

Հայ Առաքելական եկեղեցին սուրբերու շարքը դասած է Սուրբ Ներսէս Շնորհալին: Չափազանց տաղանդաշատ ըլլալու եւ հարուստ գրական ասանդ ձգելու համար իր ժամանակակից հոգեւորականներու եւ ազնուականներու կողմէ անուանուած է Շնորհալի: Իսկ մինչեւ Շնորհալի տիտղոսին արժանանալը զինք կը գանազանէին Սուրբ Ներսէս Կլայեցի անունով: 1166-էն մինչեւ 1173 թուականը Հայ եկեղեցւոյ առաքելական շարաիդէն սկսելով ան 68-րդ կաթողիկոսն է:

Մերեկեղեցւոյ շարականներու եւ տաղերու մեծմասը Սուրբ Ներսէս Կլայեցիի ստեղծագործութիւններն են: Շնորհալիի ստեղծաց գրականութեան մէջ բացի հոգեւոր եւ եկեղեցական շարականներէ, տեղ գտան են նաեւ հայրենասիրական ոգի ներշնչող գործեր: Յայտնի ստեղծագործութիւններն են «Առաւօտ լուսոյ» շարականը, որ այբուբենի յաջորդականութեամբ եռատող ստեղծագործութիւն է, Վարդանանց «Նորահրաշ պսակաւոր» շարականը, որու իրաքանչիւր տան սկզբնատառերը միասին կը կարդանք «Ներսէսի երգ», «Հաւատով խոստովանիմ» նշանաւոր աղօթքը՝ բաղկացած օրուայ 24 ժամերուն համապատասխան տուններէ, որ թարգմանուած է 36 լեզուներով, ինչպէս նաեւ «Վիպասանութիւնք» պոեմը, որ առաջին չափածոյ պատմագրական երկն է, «Յիսուս Որդի» պոեմը, «Ողբ Եղեսիո» քնարավիպերգական պոեմը:

Թէեւ Շնորհալի միջին դարերու ժամանակաշրջանի դէմքերէն է, բայց իր տօնը կը նշուի Սրբոց

Թարգմանչաց վարդապետներու հետ հոկտեմբեր ամսուայ մէջ ինկած երկրորդ շաբաթ օրը: Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն, Ս. Սահակ Պարթեւէն, Ս. Մեսրոպ Մաշտոցէն եւ Ս. Գրիգոր Նարեկացիէն յետոյ առաւել սիրուած ու մեծարուած սուրբն է Ներսէս Շնորհալին:

Սուրբ Ներսէս Շնորհալիի շարականները եւ ստեղծագործութիւնները եկեղեցասէր հաւատացեալին եւ եկեղեցականներու համար հոգեւոր ուղեցոյց է, ուր ասելի պարզ եւ ըմբռնելի կերպով ներկայացուած է Աստուծոյ էութիւնը, որ կ'ամրապնդէ եւ կը մօտեցնէ մեզ առ Աստուած:

Այսօր Ամերիկայի Միացեալ Նահանգներու՝ Նիւ Եորք նահանգին մէջ, բոլորի կողմէ սիրուած եւ կարեւոր կենդրոն դարձած, 1961-ին հաստատուած հոգեւոր ձեմարանը կոչուած է Ս. Ներսէս Շնորհալիի անունով:

Հայաստանեայց եկեղեցին Ս. Ներսէս Շնորհալի անունով նաեւ բարձրաստիճան շքանշան ունի, որ հաստատուած է 1978 թուականին եւ այն կը նուիրաբերուի ազգային բարերարներու եւ ազգային գործիչներու, որոնք նեցուկ են Հայ Առաքելական եկեղեցիին:

Այս տարի Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց եւ Ս. Ներսէս Շնորհալիի տօնը պիտի կատարուի հոկտեմբեր 14-ին: Այս տարի Հայրապետական յատուկ Կոնդակով կոգեկոչենք Ս. Ներսէս Շնորհալու վախճանման 850-ամեակը: Հայրապետական այս կոնդակով հրավէր կուղղվի Առաքելական մեր Սուրբ եկեղեցւոյ թեմական եւ ազգային կառոյցներուն, գիտական ու կրթական հաստատութիւններուն եւ այլ կառոյցներուն, որպէսզի գիտաժողովերու, հրատարակութիւններու ու հանդիսութիւններու միջոցաւ նշանաւորել Ս. Ներսէս Շնորհալու անմար յիշատակը: